2011 Թ. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԱՑՈՒՅՑ

ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՏՈՒԿ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԾԵՐԱԿՈՒՅՏԻ 28-ՐԴ ՇՐՋԱՆ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԾԵՐԱԿՈՒՅՏԻ 17-ՐԴ ՇՐՋԱՆ

Նախնական ընտրություններ - 2011 թ. փետրվարի 15
Ընդհանուր ընտրություններ - 2011 թ. ապրիլի19

Նախնական ընտրություն
Քվեի համար գրանցվելու կամ վերագրանցվելու վերջին օր՝
2011 թ. հունվարի 31

Փոստային քվեաթերթիկով քվեարկելու դիմումի վերջին օր՝
2011 թ. փետրվարի 8

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.- Եթէ նահանգային Ծերակույտի 28-րդ կամ 17-րդ շրջանների որեւէ թեկնածու մեծամասնություն չի ստանում փետրվարի 15-ի հատուկ նախնական ընտրություններում, ամենաբարձր թվով քվե ստացող երկու անձերը՝ անկախ կուսակցական պատկանելիությունից, անցնում են ապրիլի 19-ի երկրորդ ընտրության:

ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2011 թ. մարտի 8

Քվեի համար գրանցվելու կամ վերագրանցվելու վերջին օր՝
2011 թ. փետրվարի 22

Փոստային քվեաթերթիկով քվեարկելու դիմումի վերջին օր՝
2011 թ. մարտի 1

Խնդրում ենք կապ հաստատել Քաղաքի քարտուղարի հետ ընտրությունների՝ RR/CC-ում չընդգրկված թեկնածուների եւ քվեարկության մասին տեղեկություններ ստանալու համար: Շրջանային ընտրությունների ցուցակի համար ստուգեք RR/CC կայքէջը՝ ***www.lavote.net***:

ԱՐԿԱԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ
2011 թ. ապրիլի 19

Քվեի համար գրանցվելու կամ վերագրանցվելու վերջին օր՝
2011 թ. ապրիլի 4

Փոստային քվեաթերթիկով քվեարկելու դիմումի վերջին օր՝
2011 թ. ապրիլի 12

ՄԻԱՑՅԱԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2011 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 8

Քվեի համար գրանցվելու կամ վերագրանցվելու վերջին օր՝
2011 թ. հոկտեմբերի 24

Փոստային քվեաթերթիկով քվեարկելու դիմումի վերջին օր՝
2011 թ. նոյեմբերի 1

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ **Այցելեք *www.lavote.net* ընտրությունների ամբողջական ցանկի համար:**

ՃԱՆԱՉԵՔ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Քվեարկողի իրավունքների օրենք

1. Դուք իրավունք ունեք քվեարկելու եթե գրանցված ընտրող եք: Գրանցված ընտրող համարվում է Միացյալ Նահանգների այն քաղաքացին, որը բնակվում է այս նահանգում, առնվազն 18 տարեկան է եւ չի գտնվում բանտում կամ վաղաժամկետ պայմանական ազատման մեջ՝ հանցագործության պատճառով, եւ որ գրանցված է քվեարկելու իր ներկա հասցեում:
2. Դուք իրավունք ունեք ժամանակավոր քվե տալու եթե Ձեր անունը ընտրացուցակներում նշված չէ:
3. Դուք իրավունք ունեք քվեարկելու եթե ընտրամասում ներկա եք եւ հերթի եք կանգնել՝ քվեարկության փակումից առաջ:
4. Դուք իրավունք ունեք քվեարկելու գաղտնի կերպով՝ առանց բռնության:
5. Դուք իրավունք ունեք ստանալու նոր քվեաթերթիկ եթե, Ձեր քվեն տալուց առաջ, կարծում եք որ սխալ եք թույլ տվել: Եթե Ձեր քվեն տալուց առաջ դուք զգում եք, որ սխալ եք գործել, իրավունք ունեք փճացված քվեաթերթիկը փոխարինելու նոր քվեաթերթիկով: Ընտրությունների օրը, փոստային քվեարկողները նաեւ կարող են դիմել ու ստանալ նոր քվեաթերթիկ եթե նրանք վերադարձնում են իրենց փճացված քվեաթերթիկը ընտրությունների աշխատակիցին՝ քվեարկության փակումից առաջ:
6. Դուք իրավունք ունեք օգնություն ստանալու քվեարկության ընթացքում, եթե անկարող եք քվեարկել առանց օգնության:
7. Դուք իրավունք ունեք լրացված փոստային քվեաթերթիկ ուղարկելու շրջանի որեւէ ընտրամաս:
8. Դուք իրավունք ունեք ստանալու ընտրության նիւթեր ուրիշ լեզուներով, եթե Ձեր ընտրամասում բավարար բնակիչներ կան՝ դրանց արտադրությունը ապահովելու համար:
9. Դուք իրավունք ունեք հարցեր տալու ընտրության ընթացակարգի մասին եւ ընտրական գործընթացին հետեւելու: Դուք իրավունք ունեք հարցեր տալու ընտրամասի տնօրեն խորհրդին եւ աշխատակիցներին՝ ընտրության ընթացակարգի մասին, եւ պատասխան ստանալու կամ հարմար աշխատակիցին ուղարկվելու՝ պատասխանի համար: Սակայն, եթե մնայուն հարցապնդումը խանգարում է նրանց պարտականությունների կատարումը, խորհուրդը կամ ընտրության աշխատակիցները կարող են խուսափել հարցեր պատասխանելուց:
10. Դուք իրավունք ունեք զեկուցելու որեւէ ապօրինության կամ խախտման մասին տեղում ընտրական աշխատակիցին կամ նահանգի քարտուղարի գրասենյակին:

ԸՆՏՐԱԽԱԽՏՈՒՄ

Ապօրինի գրանցման եւ կամ քվեարկության խախտումների մասին տեղեկանք տալու համար, խնդրում ենք զանգահարել ընտրախախտման թեժ գիծը (800) 815-2666 ներքին 3 հեռախոսահամարով:

Լոս Անջելեսի շրջանի ՎԵՐԱՀՍԿԻՉ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Gloria Molina
Առաջին շրջան

Mark Ridley-Thomas
Երկրորդ շրջան

Zev Yaroslavsky
Երրորդ շրջան

Don Knabe
Չորրորդ շրջան

Michael D. Antonovich
Հինգերորդ շրջան

Dean C. Logan
Մատենավար/Շրջանի քարտուղար

12400 Imperial Highway
Norwalk, CA 90650
(800) 815-2666

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ

Registrar-Recorder/County Clerk
P.O. Box 1024
Norwalk, CA 90651-1024

Ընտրությունների տեղեկությունների բաժանմունք	(562) 466-1310
Փոստային քվեարկության բաժանմունք	(562) 466-1323
Քվեարկողի գրանցման կարգավիճակ	(562) 466-1310 կամ (562) 466-1323
Սահմանափակ կարողությունների տեր քվեարկողների օգնության թեժ գիծ	(562) 462-2117
Բազմալեզու օգնության թեժ գիծ	(800) 481-VOTE (8683)
Քվեարկության բաժանմունք	(562) 466-1373

Los Angeles County REGISTRAR-RECORDER/COUNTY CLERK

ԱՎԵԼԱՑՐԵՔ RR/CC-Ն ՁԵՐ ՑԱՆՑԻՆ
Պահեք Ձեր կապը *www.lavote.net* կայքէջում

- Հետեւեք մեզ ***Twitter***-ում
- Դարձեք հետեւորդ ***Facebook***-ում
- ***RSS*** Feed - Մամուլի հաղորդագրություններ
- Հասանելի տեսահոլովակներ ***Youtube***-ում

DEAN C. LOGAN
Մատենավար/Շրջանի քարտուղար

Քվեարկողի Տեղեկատու Ուղեցույց

Լոս Անջելեսի Շրջան

LOS ANGELES COUNTY
REGISTRAR-RECORDER/COUNTY CLERK
12400 IMPERIAL HIGHWAY
NORWALK, CALIFORNIA 90650

ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՇԵՔ

- Գրանցվեք քվեարկելու համար
- Ստուգեք Ձեր քվեաթերթիկի օրինակը
- **ՔՎԵԱՐԿԵՔ**

ԳՐԱՆՑՎԵՔ ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԳՐԱՆՑՎԵԼ ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Միացյալ Նահանգների քաղաքացի
- Առնվազն **18 տարեկան** հաջորդ ընտրության պահին:
- Չի գտնվում բանտում կամ վաղաժամկետ պայմանական ազատման մեջ՝ հանցագործության պատճառով:
- Կալիֆոռնիայի ներկա բնակիչ

Ե՞ՐԲ ՊԵՏՔ Է ԳՐԱՆՑՎԵՔ ԿԱՄ ՎԵՐԱԳՐԱՆՑՎԵՔ ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Եթե արդեն գրանցված եք, կարիքը չունեք գրանցվել քվեարկելու յուրաքանչյուր ընտրությունում:

- Վերագրանցման ժամկետն է ընտրությունից 15 օր առաջ:
- Դուք պետք է վերագրանցվեք ամեն անգամ որ փոխում եք Ձեր հասցեն:
- Դուք պետք է վերագրանցվեք եթե փոխում եք Ձեր անունը:
- Դուք պետք է վերագրանցվեք քաղաքական կուսակցության հարումը փոխելու համար:

ԻՆՉՊԵ՞Ս ԳՐԱՆՑՎԵԼ ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Կալիֆոռնիայում գրանցված ընտրող դառնալու համար դուք պետք է լրացնեք ընտրողի գրանցման հարցաթերթիկը եւ փոստով ուղարկեք կամ անձամբ հանձնեք մատենավարի գրասենյակում: Հարցաթերթիկ ձեռք բերելու համար՝
- Այցելեք ***www.lavote.net*** կայքէջը եւ կտտացրեք “Register to Vote” կոճակը:
- Այցելեք մեր RR/CC շրջանային գրասենյակներից որեւէ մեկը:
- Գրանցման թերթիկը կարելի է վերցնել Լոս Անջելեսի շրջանի զանազան վայրերում՝ շրջանային, նահանգային եւ դաշնային իշխանությունների գրասենյակների մեծ մասում, նահանգային ավտոտեսչության գրասենյակներում, բնակչության օգնության գրասենյակներում (DPSS, WIC) եւ փոստատներում:

ԻՆՉՊԵ՞Ս ԳԻՏԵՄ ԵԹԵ ԳՐԱՆՑՎԵԼ ԵՄ ՔՎԵԱՐԿԵԼՈՒ

- Եթե ստանում եք Ձեր պաշտոնական տեղեկագիրը
- Գնացեք ***www.lavote.net*** կայքէջ առցանց ստուգելու Ձեր ընտրողի կարգավիճակը:
- Զանգահարեք մատենավարի գրասենյակը (562) 466-1310 կամ (562) 466-1323 հեռախոսահամարներով:

ՁՆՆԵՔ ՁԵՐ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Ի՞ՆՉ ԿԱ ՁԵՐ ՏԵՂԵԿԱԳՐՈՒՄ

Յուրաքանչյուր ընտրությունից առաջ, բոլոր գրանցված ընտրողներին ուղարկվում են պաշտոնական տեղեկագրեր՝ թեկնածուների եւ քվեարկության առարկայի մասին տեղեկություններով, նրանց օժանդակելու քվեարկության գործում:

Նշան դրեք Ձեր ընտրության վերաբերյալ Ձեզ ուղարկված տեղեկագրի վրա եւ ընտրության օրը այն Ձեզ հետ բերեք ընտրական տեղամաս, որպեսզի անհրաժեշտության դեպքում օգտվեք դրանից:

ԽՆԴՐՈՒՄ ԵՔ ՈՒՐԻՇ ՏԵՂԵԿԱԳԻՐ

- Ձեռք բերեք Ձեր տեղեկագիրը առցանց օգտվելով “Locate Your Polling Place” հղումից ***www.lavote.net*** կայքէջում:
- Զանգահարել (800) 815-2666 կամ (562) 466-1323 հեռախոսահամարներով

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՈՒՄ

Դուք կարող եք հարել վավերացված վեց քաղաքական կուսակցություններից մեկին կամ «մերժել հաստատել»

- Ամերիկյան անկախ
- Դեմոկրատ
- Կանաչ
- Ազատարարական
- Խաղաղություն և ազատություն
- Հանրապետական

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Դուք պարտավոր չեք նշել կուսակցական հարում Ձեր գրանցման թերթիկում:

ԿԱՐԻՔՆ ՈՒՆԵՆՔ ԸՆՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ

ԸՆՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

Մենք միշտ կարիքն ունենք հանրային ոգով քաղաքացիների, ովքեր ցանկանում են ծառայել ընտրության օրը: Ընտրական աշխատողները ստանում են $80-ից $100, եւ հավելյալ $25, վարժողական դասընթացի մասնակցելու համար:

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ

Առաջարկեք Ձեր վայրը որպես ընտրական տեղամաս եւ ստացեք $25: Հատուկ կարիքն ունենք վայրերի, որոնք հասանելի են սահմանափակ կարողությունների տեր մարդկանց:

Իբրեւ ընտրական աշխատող աշխատելու կամ ընտրամաս առաջարկելու համար, խնդրում ենք զանգահարել (562) 466-1373 հեռախոսահամարով:

ՓՈՍՏՈՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Կալիֆոռնիայում որեւէ գրանցված քվեարկող կարող է ընտրությունում փոստային քվեաթերթիկի դիմում ներկայացնել կամ բոլոր ընտրություններում իբրեւ **մշտական փոստային քվեարկող:**

ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ԴԻՄՈՒՄ ՓՈՍՏՈՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

- Ներկայացրեք առցանց դիմում ***www.lavote.net*** կայքէջում՝ կտտացնելով “Vote-By-Mail” կոճակը:
- Լրացրեք եւ ետ ուղարկեք դիմումի հարցաթերթիկը Ձեր տեղեկագրի ետեւի շապիկում:
- Ձեռք բերեք դիմումը “pdf”-ով առցանց՝ ***www.lavote.net*** կայքէջից:
- Ներկայացրեք գրավոր դիմում որն ընդգրկում է՝ լրիվ անուն, տնային հասցե, ստորագրություն եւ փոստային հասցե: Փոստով ուղարկեք՝

  Registrar-Recorder/County Clerk
  Vote By Mail Section
  P.O.Box 30450
  Los Angeles, CA 90030-0450

- Անձամբ քվեարկեք ընտրությունից 29 օր առաջ մատենավարի գրասենյակում, որի հասցեն է՝

  12400 Imperial Highway
  Norwalk, CA 90650

ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ԴԱՌՆՈՒՄ ՄՇՏԱԿԱՆ ՓՈՍՏՈՎ ՔՎԵԱՐԿՈՂ

- Ձեռք բերեք եւ լրացրեք մշտական փոստային քվեարկողի դիմումնագիր ***www.lavote.net*** կայքէջում:
- Դուք կարող եք դիմել մշտական փոստային քվեարկողի կարգավիճակի ստանալու համար Ձեր քվեարկող գրանցման հարցաթերթիկում:

Ե՞ՐԲ ԿԱՐՈՂ ԵՄ ԴԻՄԵԼ ՓՈՍՏՈՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

- Սկսելով ընտրությունից 29 օր առաջ եւ ոչ ավելի ուշ, քան մինչեւ 7 օր ընտրությունից առաջ

ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ ԻՄ ՓՈՍՏԱՅԻՆ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ

- Ընտրությունների օրը, քվեարթերթիկները պետք է փոստով ուղարկվեն եւ մատենավարի գրասենյակը հասնեն երեկոյան ժամը 8-ից առաջ: Ուշացած քվեաթերթիկները հաշվառման չեն ենթարկվելու:
- Հանձնեք Ձեր քվեաթերթիկը Լոս Անջելեսի Շրջանի որեւէ ընտրամասի՝ երեկոյան ժամը 8-ից առաջ ընտրության օրում:

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ



Ո՞Ր Է ԻՄ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԸ

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Ընտրական տեղամասերը կարող են փոխվել յուրաքանչյուր ընտրությունում: Ձեր ընտրական տեղամասը գտնելու համար՝

- Նայեք Ձեզ ուղարկված ընտրական տեղեկագրի ետեւի շապիկի վրա:
- Այցելեք մեզ ***www.lavote.net*** կայքէջում
- Զանգահարեք մեր թեժ գիծը (800) 815-2666 ներքին 1 հեռախոսահամարով

Ե՞ՐԲ ԿԱՐՈՂ ԵՄ ՔՎԵԱՐԿԵԼ

- **Ընտրական տեղամասերը բաց են ընտրության օրը առավոտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 8-ը:**

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՐ ՔՎԵԱՐԿՈՂՆԵՐ

Լոս Անջելեսի շրջանի մատենավարի գրասենյակը մի շարք ծառայություններ ունի սահմանափակ կարողությունների տեր քվեարկողների համար: Դրանց շարքին են ընտրությունների հասանելի նյութեր, անվակառքով հասանելի ընտրական տեղամասեր եւ քվեարկության օժանդակ գործիքներ, որոնք ապահովում են դրական ու անկախ քվեարկության փորձառություն: Այցելեք ***www.lavote.net*** կայքէջը ավելին սովորելու համար, կամ զանգահարեք (562) 466-1310 հեռախոսահամարով:

ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դաշնային եւ նահանգային օրենքի հետեւողությամբ, մեր գրասենյակը ընտրական տեղեկություններ է տալիս վեց լեզուներով՝ անգլերենից դուրս՝

չինարեն	中文
ճապոներեն	日本語
կորեերեն	한국어
իսպաներեն	**Español**
թագալոգ/ֆիլիպիներեն	**Tagalog**
վիետնամերեն	**Tiếng Việt**

Լրացուցիչ տեղեկությունների համար, զանգահարեք (800) 481-VOTE (8683) հեռախոսահամարով կամ այցելեք ***www.lavote.net*** կայքէջը